Թեկնածուներին ներկայացվող պահանջներն են՝

- Արհմիութենական գործունեության կամ ՀԸԳՀ-ով սահմանված ոլորտներից որևէ մեկում առնվազն երկու տարվա գործունեության իրականացում, որոնց արդյունքներով կազմվել է (են) զեկույց(ներ), այդ թվում՝ հետազոտություններ, վերլուծություններ, հայեցակարգեր և այլն,

- ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը,

- ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը

Հավակնորդի ներկայացվելիք փաստաթղթերը պետք է ներառեն (պատճեներ)՝

- առաջադրող արհմիութենական կազմակերպության պետական գրանցման վկայականը, կազմակերպության ոլորտային գործունեության մասին տեղեկություններ (Organisation profile),

- հավակնորդի կենսագրական տվյալները,

- ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը՝ շարադրված մինչև մեկ A4 էջ ծավալով,

- ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը՝ շարադրված մինչև մեկ A4 էջի ծավալով,

- կազմակերպական կարողությունները հավաստող տեղեկանք (արհեստակցական կազմակերպությունից),

- հայտարարագիր այն մասին, որ հավակնորդը նախընթաց առնվազն 1 տարվա ընթացքում չի եղել պետական իշխանության մարմնի աշխատակից՝ մշտական աշխատանքային պայմանագրով կամ վճարովի ծառայություններ չի մատուցել պետական իշխանության մարմնին, ինչպես նաև՝ ընտրվելու դեպքում ՔՀՊ կազմում չի դառնալու պետական իշխանության մարմնի աշխատակից կամ վճարովի ծառայություն չի մատուցելու պետական իշխանության մարմնին:

- Միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից կազմակերպված աշխատանքային օրենսդրության և արհմիությունների գործունեության վերաբերյալ դասընթացների, սեմինարների հավաստագրեր/ վկայականներ

- Անգլերեն լեզվի գերազանց իմացությունը պարտադիր է:

Հարցերի դեպքում կարող եք գրել educate.ctua@gmail.com էլ փոստով կամ զանգահարել 010 520445: